«Պատրոն» բառի հնագույն գործածությունը մեզ հայտնի չէ նույն կեչառվաց վանքի 1003 թվականի մի այլ արձանագրությունից*. այստեղ «Գրիգոր մագիստրոս որդի Հասանայ» շինում է յուր յեկեղեցին ի միջի այլոց և յուր պատրոնի բարեխոսության համար. մենք կտեսնենք, վոր այս Գրիգոր Մագիստրոսը նույն չէ հայտնի մատենագիր Գրիգոր մագիստրոսի հետ, բայց նույն տոհմից է. ակնարկված «պատրոն»-ը վոչ այլ վոք կարող է լինել, քան Գագիկ Ա. Շահնշահ, ուրեմն Պահլավունի իշխանի գերագույն պետը։ Ավելի հաճախ է «պատրոն» բառի գործածությունը ԺԳ. դարում զանազան նշանակությամբ. մեզ համար կարևորն այն է, վոր այդ բառը գործ է դրված ինչպես վանքերի հովանավորի, նույնպես և գերագույն իշխանի նշանակությամբ. հաճախ ստորադրյալ իշխանները նվերներ են տալիս վանքերին, խաչարձաններ կանգնում կամ յեկեղեցիներ շինում իրենց գերագույն իշխանի՝ պարոնի կամ պատրոնի արևշատության համար։ «Պատրոն» բառն, ի հարկե, հատուկ տիտղոս չէ միայն Զաքարյանների համար, այլ յուրաքանչյուր ստորադաս իշխանի համար պատրոն եր կամ պատրոն նորա գլխավոր իշխանը. այդ իմաստով է գործածված և այս արձանագրության մեջ։ Մենք տեսանք, վոր Վասակ Խաղբակյան յուր նոր իշխանության մեջ հաստատված եր Իվանե աթաբակի կողմից իբրև «կողմնակալ» կամ «կողմնապահ», թեև ժառանգական իրավունքով, բայց վորպես ներկայացուցիչ գերագույն իշխանավորի. «կողմնապահությունները» մաս են գերագույն իշխանի տերության կամ պետության ամբողջության։

Կեչառոյց, Կաթուղիկի արեւմտ. դրան արձ. Պատկեր 22. Հավել. Ա. 10.

Իբրև արձան յերախտագիտության Վասակ իշխանը շինում է այս գեղեցիկ տաճարը «յերկարություն կենաց» յուր պատրոնների, յեղբայրների և վորդիների, ինչպես և «յարևշատութիւն» յուր և յուր կնոջ Մամային։ Խաղբակյանների, ինչպես և մյուս իշխանների ընդհանուր ստորադրելության մասին քաղաքական և զինվորական տեսակետներով Զաքարյանների վերաբերությամբ տեսանք և վերև (Ա. գլ. 17). տարաբաղդաբար ավելի մանրամասնություններ չգիտենք, թե ինչ կերպ եր արտայայտվում այդ ստորադրելությունը, ինչ չափով հարկ եյին վճարում կամ պատերազմական ավարից բաժին հանում գերագույն իշխանին*։ Ստորա-

* Տես մեր Գրչութեան արուեստը. Գ. § 18։

* Գոշ Մխիթարի Դատաստ. (յեր. 311—314. 314—317) տված տեղեկությունները այս խնդիրների մասին մեզ միայն մոտավոր գաղափար կարող են տալ, մա-